Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

(18 փետրվարի 2003 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց,

Բարձրյալի ողորմած կամքով և հայրենի երկրի բարեխնամ կարգաց համաձայն վաղն առավոտյան մասնակցելու ենք հայրենական մեր կյանքում կարևոր և նշանակալի իրադարձության՝ Հանրապետության նախագահի ընտրությանը:

Վաղը յուրաքանչյուրիս ազատ ընտրությամբ արտահայտվելու է համազգային մեր կամքը: Վաղը վերստին առիթն ունենք վկայելու մեր սերը Հայրենիքի հանդեպ, յուրաքանչյուրիս պատասխանատվությունը մեր այսօրվա, մեր պատմության ու գալիքի հանդեպ:

Ընտրությունների նախօրեին աղոթքով մեր հայացքները դեպի երկինք բարձրացնենք և հայցենք, որ Տիրոջ Ճշմարտության Սուրբ Հոգին առաջնորդի մեզ, և մեր որոշումներն ու քայլերը շարունակեն ծառայել Հայաստանի նոր օրվան ու մեր ժողովրդի նոր կյանքին:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, ձեզ հետ ենք հավատով ու բարի սպասումով և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք ամենքիդ Հայրապետական Մեր օրհնությունը:

Իբրև շառավիղ երանաշնորհ 131 հոգելույս Հայրապետների, ովքեր ապրեցին ու գործեցին մեր Հայրենիքը ազատ, շեն ու պայծառ տեսնելու անձկությամբ, դիմում ենք ձեզ, սիրեցյալ ժողովուրդ հայոց, արժեցնենք ընտրությունների օրը մեր կյանքում, արժեցնենք արդարամտությամբ, խաղաղության ու եղբայրության սիրով՝ Աստծո և Հայրենիքի առջև մեր պարտքին խոնարհյալ: Տիրոջ ու Հայրենիքի առջև ամենքս ծնրադիր ենք, ամենքս շնորհապարտ:

Այս զգացումով վերստին աղոթք ենք բարձրացնում երկինք և նախագահական ընտրությանը մաղթում բարի և օրհնյալ ընթացք:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ՝ ամենեսեան. ամէն»: